
ԱՍՏԾՈՒ ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ
(Հայր Աստված)

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

Քրիստոնեության մուտքով հեթանոսական աստվածները դարձան կուռք, դիք կամ չաստված, իսկ նոր հավատը հայ եկեղեցու դավանաբանության մեջ մտցրեց Սուրբ Երրորդություն, Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի անվանումները, որոնց քննությունը կատարվել ու կատարվում է տարբեր տեսանկյուններից:

Հրեական և քրիստոնեական կրոններում արգելվում է Աստծու անունը գործածել հենց այնպես, ինչը հիմնավորվում է սուրբգրային պատվիրաններով. «Քո Տէր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես, որովհետեւ Տէրը արդար չի համարում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում» (Ել., Ի 7):

Աստծու անունը տրվում է մի շարք կապակցություններում՝ Աստծո անուն, Աստծո անունը կանչել, Աստծո անունը ճանաչել, Աստծո անունը հայհոյել, Աստծո անունը պղծել, Աստծո անվանը հավատալ, Աստծո անունը պաշտել, Աստծու անունով սուտ խոսել և այլն, որոնք, ինչ խոսք, ցույց են տալիս, որ Աստծու անուններից յուրաքանչյուրն ունի որոշակի խորհուրդ և ոչ ինքնանվանողական արժեք:

Սուրբ Գրքում Աստված ներկայանում է բազմաթիվ անուններով, ինչպես նաև անվանումներով: Աստված Աբարիչն է. «Որ արար գերկիրդ եւ ստեղծ գղա...» (Եբ., ԼԳ 3): Նա Տէրն է ամենայնի. «Ես Տէր Աստուած, այս է անուն իմ» (Ես., ԽԲ 8): Սա բառացի պատճենում է հունարեն բնագիրը՝ ἐγὼ κύριος ὁ θεός, τοῦτο μου ἔστιν τὸ ὄνομα²: Նա Թագավորն է. «Թագաւոր յաղթող եմ ես, ասէ Տէր ամենակալ» (Մղբ., Ա 14): Նա է Հայրը, Դատավորն ու Իշխանը. «Տէր Հայր մեր, Տէր Դատաւոր մեր, Տէր իշխան մեր» (Ես., ՀԳ 22): Հետաքրքիր փաստ է արձանագրում. «19-րդ դարում որոշ մեկնաբաններ կասկածի տակ են առնում Հնգամատյանի, ուրեմն նաև՝ Ծննդոցի մովսիսական ծագումը: Մատնանշելով նրանում Աստծու տարբեր անունների գործածության իրողությունը՝ եզրակացնում են, որ շարադրողն օգտվել է զանազան

¹ Անվանում տերմինի տակ ներառել ենք մականուններն ու ռճանունները:

² Septuaginta, Stuttgart, 1979.

աղբյուրներից»³: Այսինքն՝ կարծվում է, որ տարբեր հեղինակներ միայն կարող էին Աստծուն տարբեր անուններով ներկայացնել:

Քննենք Հայր Աստծուն տրված անունների ու անվանումների մի մասը⁴:

Արարիչ (Ստեղծիչ, Ստեղծող, Բրուտ) (*հուն.*՝ Κτίστης, Ποιητής, *ասոր.*՝ Բառոյա, *ռուս.*՝ Творец, Создатель, Образователь): Աստծու անվանումների մեջ առաջնայինն է Արարիչը, որն անպայմանորեն պետք է կիրառվեր Հնգամատյանում՝ բնորոշելու Աստծու արարչագործման էությունը, արարելու կարողությունը և այդ կարողության գործադրումը, որի արդյունքը տիեզերքն է: Ծննդոց գրքի խորհուրդը Աստծու արարչագործությունն է. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր...» (Ծն., Ա 1): Եվ իզուր չէ, որ որոշ ձեռագիր մատյաններ Ծնունդը վերնագրի փոխարեն դրել են Գիրք Արարածոց⁵: Այդ հետո միայն Աստված կղանա Արքա, Թագավոր, Դատավոր և այլն. Ծննդոցում Նա Արարիչ է, քանի որ Աստծու կատարած առաջին գործողությունն արարելն էր, որի հումանիշ ստեղծել-ը կիրառված է արևմտահայերենում. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ա-2) և արևելահայերենում (Ա-3). «Ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը...»: Ոչ միայն այսպես, այլև գրաբար բնագրում (Ա-1) գործածված է Ստեղծիչ. «... եւ դու Ստեղծիչ մեր, եւ գործք ձեռաց քոց ամենեքին մեք» (Ես., ԿԴ 8): Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշունչը⁶ ևս տալիս է Ստեղծիչ տարբերակը: Ա-3՝ արևելահայերեն տեքստը դարձյալ տալիս է ստեղծիչ, միայն փոքրատառ գրությամբ: Բսկ ահա Ա-2 տեքստը բոլորից տարբերվում է. տրված հատվածում կարդում ենք. «...մենք կաւ ենք, ու դուն մեր Բրուտն ես, և ամէնքս քու ձեռացդ գործքն»: Պարզ է,

³ Տե՛ս Ա. Կ. Կ ա յ ա յ ա ն. Հին Կտակարանի ներածություն, Երևան, 2000, էջ 70:

⁴ Աստվածաշնչյան անունների քննության համար ուսումնասիրել ենք երեք հայերեն թարգմանություն-բնագրեր կամ տեքստեր. նախ՝ Աստվածաշնչի գրաբար այն օրինակը, որը 1997 թ. հրատարակվել է Երևանում՝ 1895 թ. Կոստանդնուպոլսում տպագրված և 1929 թ. Վիեննայում վերահրատարակված գրքի հիման վրա՝ «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց»: Պայմանականորեն այս օրինակը անվանել ենք Ա-1: Ա-2 օրինակը արևմտահայերեն հրատարակություն է՝ «Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր կտակարանաց եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած» (1890 թ., Կոստանդնուպոլիս): Ա-3-ը Աստվածաշնչի 1994 թ. արևելահայերեն նոր թարգմանության վերահրատարակությունն է՝ «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանների, արևելահայերէն նոր թարգմանութիւն» (Ս. Էջմիածին-Երևան, 1999 թ.), որի թարգմանության համար հիմք է ընդունվել Արսեն Բագրատունու հրատարակած (1860) Աստվածաշունչը:

⁵ Տե՛ս Հ. Յոհաննէս Զօհրապեան. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց (այսուհետև՝ ԶԱ), Վենետիկ, 1805:

⁶ Քանի որ Մխիթար Սեբաստացու հրատարակած Աստվածաշունչը (1733 թ.) Ոսկան Երևանցու հրատարակած տպագիր առաջին Աստվածաշնչի (1666 թ.) տարբերակն է՝ խմբագրական ու սրբագրական որոշ շտկումներով, ուստի հարկ եղած դեպքերում անդրադարձել ենք նաև դրան՝ այն տալով ՄՄԱ հապավմամբ:

որ այստեղ բրուտ բառը փոխաբերական իմաստով է կիրառված. զարմանալին այն է, որ հայերեն մյուս տեքստերը բրուտ բառը չեն գործածում, այլ՝ ստեղծիչ: Բրուտ բառի այս իմաստային կիրառությանը չի անդրադարձնում անգամ ՆՀԲ-ն: Միակ բառարանը, որ բացի ուղիղ իմաստից (շինիչ խեցեղեն անօթոց) ուշադրություն է դարձրել այս գործածությանը, ԲՄԳ-ն է, որտեղ տրվում է հետևյալ մեկնաբանությունը. «Բրտին իշխանությունը կալին վրայ օրինակ կառնուի Սուրբ Գրոց մեջ առ ի ցուցանել զիշխանությունն Աստուծոյ, որ քրաւ մեզ կաւէ, ուստի և ինչպէս որ կուզէ կը շինէ և կը վարէ զմեզ..., Մի՞թէ ստեղծուածը իր Ստեղծողին կրնայ ըսել թէ՛ Ձիս ինչո՞ւ ատանկ շինեցիր: Բրուտը իշխանություն չունի՞ կալին վրայ՝ նույն շաղուածքէն աման շինելու, մէկը պատուոյ և միուսը անարգանաց համար» (Հովմ., Թ 20, 21): *НЖБ* - ն⁸ այս դեպքում տվել է *образователь* տարբերակը, որը թարգմանվում է դարձյալ ստեղծիչ: Հետաքրքիրն այն է, որ բրուտ-ը ուղղակիորեն կապվում է ասորերեն Պեշիթթայի⁹ Գավոլա տարբերակին, որ բառացի նշանակում է բրուտ, հունցիչ, բայց ոչ ստեղծիչ:

Աստված և՛ արարեց, և՛ անվանեց. «... Եւ կոչեաց Աստուած զլոյսն Տիւ, եւ զիւսարն կոչեաց Գիշեր..., Եւ կոչեաց Աստուած զհաստատությունն Երկին... Եւ կոչեաց Աստուած զցամաքն Երկիր, եւ զծողովս ջուրցն կոչեաց Ծովս...» (Մն., Ա 5):

Եբրայերեն բարա-ն նշանակում է արարել (*հմմտ. ասոր.՝ բոա-արարել*, Բառոյա-Արարիչ, հունարեն՝ *εποίησεν*), ռուսերեն տեքստում համապատասխանաբար թարգմանական համարժեքը դրվել է *творить* և ոչ թե *сделать*, *создать* կամ *сотворить*, որոնք բոլորն էլ ինչ-որ չափով հոմանիշ են իրար, ոճական առումով՝ համանիշներ են և ոչ նույնանիշներ, ու այդ բոլոր ձևերն էլ Աստվածաշնչի տարբեր գրքերում կիրառված են:

Արար-ը՝ գրաբարյան առնել անկանոն բայի անցյալ կատարյալի հիմքն է՝ արարմատի կրկնությամբ՝ արարի, արարեր, արար, արարաք, արարէք(իք), արարին, որի անցյալ դերբայն է՝ արարեալ, և ենթակայականը՝ արարող: Ըստ Ա. Աբրահամյանի՝ ենթակայականի հնագույն ձևն է արարիչ¹⁰: Կարծում ենք՝ սա ոչ թե հնագույն ձևն է, այլ գրաբարի համար արդեն գործածական բառակազմական կադասար՝ արար + իչ (*հմմտ.՝ հաստիչ, յորդորիչ, յօրինիչ, ստեղծիչ*), և որը աստվածաշնչային բոլոր կիրառություններում գոյական է¹¹: Արարիչ ձևից հենց գրաբարյան շրջանում

⁷ Բառարան Սուրբ Գրոց (այսուհետև՝ ԲՄԳ), Կոստանդնուպոլիս, 1881, էջ 102:

⁸ Новая Женевская учебная Библия (Синодальный перевод) (далее – НЖБ), русск. изд. под общ. ред. В. А. Цорна, 1998 г.

⁹ Աստվածաշնչի ասորերեն հնագույն տարբերակը՝ Պեշիթթա. *Biblia Sacra Juxta versionem Simlicem Quae dicitur PSCHJITA Beruti Typis tyipographic catholicae*.

¹⁰ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյանի. Գրաբարի ձևնարկ, Երևան, 1976, էջ 188:

¹¹ Գրաբարում -իչ-ով ձևերը արտահայտում էին ենթակայական դերբայի իմաստ:

արդեն առկա են արարչագործել (հումանիշ ձևերն են՝ ստեղծանել, առնել, հաստել, յօրինել, ճարտարապետել), արարչագործություն բառերը:

Հր. Աճառյանը ար արմատին և արարիչ կազմությանը անդրադարձել է առնել գլխաբառի տակ՝ առնել-ի հնախոսական արմատը համարելով ար-ը և բայի իմաստը համեմատելով հունարենի իմաստներին (ՀարմԲ.): Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» (ՀՄԲ) ար-ը տրվում է իբրև առանձին գլխաբառ, և դարձյալ հղվում է առնել և յարել բառերին¹²:

Ար արմատի մասին որոշակիորեն տարբեր մեկնաբանություններ են տրվում¹³: Կա կարծիք, ըստ որի՝ Արարատ (Արարատի երկիր) անունն առնչվում է նաև մարդու արարման առեղծվածի հետ, և որ պատահական չեն մեր լեզվում Արարիչ, արարել, արարած, արորդի, Արարատ բառերը: Ենթադրվում է, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի, ինչպես նաև հունական, հնդկական, իրանական և այլ դիցարանների հնագույն շատ աստվածների Ար-ով սկսվող անուններում՝ Արուրու (նախաշումերական), Արամագ (բոլոր աստվածների հայրը հայոց դիցարանում), Արդի, Արսիմելա, Արածա (Արարատ-Ուրարտուի դիցարան), Արմատի (իրանական), Արտեմիս, Արես (հունական), Արունա, Արյաման (վեդայական), Ռա-Ար (արևի եգիպտական աստված), Արա Գեղեցիկ (հայկական)՝ առկա է Ար արմատը¹⁴:

Իսկ ի նչ տեղեկություն է տալիս մեզ Սուրբ Գիրքը. նախ ասենք, որ Արարիչ բառը գործածված է քսանչորս անգամ՝ Բ Օրինաց, Սաղմոսների, Ժողովողի, Եսայու, Ովսեի, Բարուքի և այլ գրքերում, այսինքն՝ մեծամասամբ Հին Կտակարանում, և կիրառություններից միայն հինգը՝ Նոր Կտակարանում են: Եվ դա ունի իր տրամաբանությունը. բոլոր կիրառությունները վերաբերում են Հայր Աստծուն: Անգամ միաժամանակ հանդես գալով՝ և՛ Աստված և՛ Արարիչ բառերը հստակ դառնում են հումանիշներ, ավելի ճիշտ կլինի ասել նույնանիշներ, ինչպես՝ «... լքեց Տէր Աստծուն՝ իր Արարչին...» (Բ Օր., ԼԲ 15), «Դու մոռացար Աստծուն՝ քո Արարչին...» (Ես.,

¹² Տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀարմԲ), հ. Ա, Երևան, 1970, էջ 261–262: Գ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Երևան, 2010, էջ 83:

¹³ Տե՛ս Ա. Տերյան. Ար աստծո պաշտամունքը Հայաստանում, Երևան, 1995, նույնի՝ Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2011, նույնի՝ Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, Երևան, 2014:

¹⁴ Ավելին, նույն հեղինակը հայերենի արքա, եգիպտական փարավոն, հռոմեական կեսար, ռուսական ցար, եվրոպական կարոլ բառերում հստակ առանձնացնում է ար արմատը, ինչը կաճում ենք այնքան էլ համոզիչ չէ (տե՛ս Ա. Տերյան. Եվրոպայի ժողովուրդների հնագույն գրավոր աղբյուրները իրենց նախահայրենիքի՝ Հայաստանի ու հայերի մասին, էջ 15, 17): Г р. К а п а н ц я н. Хеттские боги у армян в связи с хеттским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще. Ереван, 1940, с. 27.

ԾՄ 13): Հումանիզմների ցանկը գնալով ընդարձակվում է. «Այո՛, դու իմ հոր Աստուածն ես, Իսրայելի ժառանգութեան Աստուածը, երկնքի ու երկրի Տէրը, ջրերի Արարիչը, դու ես քո բոլոր արարածների Թագավորը» (Հդ., Թ 17): Արդյոք օտար տեքստերը և՛ ս համարժեք են հայերենի տարբերակներին: Ռուսերեն բնագրում (НЖБ) հայերեն Արարչի դիմաց նույն օրինակներում մե՛կ տրված է Творец - արարիչ, ստեղծող, մե՛կ՝ Создатель - ստեղծող, արարիչ-աստված¹⁵, որոնք, ինչ խոսք, հումանիզմներ են: Իսկ Հայտնության գրքում արդեն կիրառված է՝ Сотворившему небо ... Պեշիթթեան ավելի հաճախ գործածում է արարել բայը - ըվադ, բայց տալիս է նաև Արարչին համարժեք Ավոդա անունը:

Հայ միջնադարյան բանաստեղծության մեջ Արարիչ է նախ Հայր Աստվածը, ապա և Հիսուսը: Հիսուսին Արարիչ անվանելու գոնե մեկ դեպք Նոր Կտակարանում չկա, ինչը հարցականի տակ է դնում միջնադարյան բանաստեղծական հատվածներում իմաստային այս կիրառություններին: Այսպես՝ Կոմիտաս Աղցեցու շարականում խոսքը Հռիփսիմյան կույսերի մասին է, որտեղ, ինչպես տեսնում ենք, Արարիչը Հիսուս Քրիստոսն է. «...կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին՝ խաչակից լինելով կուսածին Արարչին» (ԳՀԲ, 55): Կամ՝ Գրիգոր Նարեկացին գրում է. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Որդի աստուծոյ կենդանոյ, Արարիչ երկնի եւ երկրի», «Շաւիղն հետագոտելի՝ արեամբ արարչին նկարեալ ի փառս լուսոյ» (ԳՆՄՈ, 337, ՏԳ, 81, 214)¹⁶: Կարծում ենք՝ Արարչի այս կիրառությունները փոխաբերական իմաստ են արտահայտում: Որ արքան, թագավորը, դատավորը, կենարարը կարող են բնութագրել թե՛ Հորը և թե՛ Որդուն, հաստատվում են աստվածաշնչային բնագրերով ու հիմնավոր են, բայց արարիչն ու ստեղծիչը միայն Հայր Աստծուն են բնութագրում: Թերևս մեկ այլ տեսանկյունից մոտենալով, այն է՝ Սուրբ Երրորդությունը՝ իբրև մեկ աստված, կարելի է այդպես ևս ընկալել: Այդ նույն ձևով Տէրը և՛ Հայրն է, և՛ Որդին:

Տեր, Տեր Տեր, Ադոնա/Ադովնա, Ադոնայի/Ադովնայի (հուն.՝ Ὁ Κύριος, κύριος κύριος, ասոր.՝ Մադյա, Մառ Մառ, բուս.՝ Господь): Հին ժամանակներում արգելվում էր Աստծուն անվամբ դիմել, անունը բառացի արտասանել: Եվ բոլոր այն դեպքերում, երբ կարդում էին սուրբգրային տեքստը, և որտեղ հանդիպում էր Աստծու անունը, գործածում էին Տեր կամ Ադոնայի. «... եւ մի՛ պղծիցէք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ» (Ղևտ.): Հետաքրքիրն այն է, որ թե՛ Հայր Աստվածը և թե՛ Հիսուսը իրենց Տեր են անվանում. «Եւ եթէ մէկը ձեզ ասի. «Այդ աւանակը ինչո՞ւ էք արձակում», կասէք. «Տիրոջը պէտք է» (Մրկ., ԺԱ 3):

¹⁵ Տե՛ս Ար. Ղ ա թ ի բ յ ա ն. Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1982, էջ 1143, 1217:

¹⁶ Փ. Գ. Մ է յ թ ի խ ա ն յ ա ն. Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V–XX դդ. հայ բանաստեղծության), Երևան, 2001:

Հայերեն Աստվածաշունչ բոլոր գրքերում (Մ-1, Մ-2, Մ-3, ՄՄԱ, ՁԱ) Ադոնայի-ն - թարգմանված է կա՛մ Տէր, կա՛մ Տէր Տէր ձևերով, և միայն Եզեկիելի գիրքն է գործածում Ադոնայ, Ադոնայի տարբերակը (այդպես՝ թե՛ ՄՄԱ-ում, թե՛ ՁԱ-ում՝ և՛ Ադոնայի, և՛ Ադովնայի), ինչպես՝ «Այսպես ասէ Ադոնայի Տէր ...» (Եզկ., Ե 5, 7, 8, 11, Ձ 3, 11, Ը 1...): Եվ այդպես գրեթե հարյուր անգամ, և դա այն դեպքում, երբ շատ անգամ (բայց ավելի պակաս Ադովնայի Տէր-ից) կիրառված է նաև գուտ Տէր Տէր ձևը: Եթե Աստվածաշնչի ուրիշ որևէ գրքում Ադովնայի տարբերակը չի գործածված, ապա ենթադրելի է, որ սա թարգմանչի կողմից հավելում է: Աստվածաշնչի գրաբար տեքստի Եզեկիելի գրքում բազմաթիվ անգամներ տրվում է Ադոնայի Տէր, իսկ ընդամենը երկու դեպքում՝ Ադոնայի Տէր Տէր. «Այսպես ասէ Ադոնայի Տէր Տէր (Եզկ., Գ 27), «... Կենդանի եմ ես ասէ Ադոնայի Տէր Տէր» (Եզկ., ԼԴ 8), ինչը, կարծում ենք, թարգմանչական կամ գրչագրական սխալի հետևանք է, քանի որ գրաբար տեքստի տողատակում նշվում է, որ երբայերեն բնագրում երկրորդ Տէր-ը պակասում է, նույն ձևով նաև ռուսերեն (Господь Бог) և հունարեն (κυριος κυριος կամ միայն κυριος) տեքստերում բացակայում է երկրորդ Տէր-ը: Արևելահայերեն տարբերակը այս գործածությունների դիմաց դնում է Ամենակալ Տէր Աստված, սակայն, կարծում ենք, դա ևս ճիշտ չէ, քանի որ Ամենակալ-ը Սադայ անվան հայերեն տարբերակն է և ոչ Ադոնայի-ի:

Հետաքրքիր վիճակագրություն է արձանագրում Աստվածաշնչի Համաբարբառ...-ը. Տէր բառը գրաբար տեքստում գործածվել է 8907 անգամ¹⁷, և այդ հաշվարկից դուրս են տեր բառի՝ ոչ Աստված նշանակող կիրառությունները:

Ադոնա կամ Ադոնայի-ն երբայերեն բառ է, որի նշանակությունն է՝ Տէր, իշխող, Տէր իմ (Տէրը Տերն է): Ըստ Հր. Աճառյանի՝ Ադոնա-ն, երբայական բառ լինելով, չկա մյուս սեմական լեզուներում, բացի փյունիկերենից: Անունը ստուգաբանվում է Տէր իմ¹⁸: Ըստ ԲՅԱ-ի՝ Ադոնայի-ն հոգնակի ձևն է Աստծու անվանումներից մեկի և ստուգաբանվում է որպես տեարք իմ¹⁹:

Հետաքրքիր է նաև այն, որ փոխառյալ Ադոն արմատը, առկա է սուրբգրային տեքստում նաև որպես անվան բաղադրիչ՝ Ադոն + իա(ս). մեկնաբանվում է որպես՝ Եհովան իմ Տերն է կամ Տերը իմ Տերն է: Այս անվամբ Հին Կտակարանում գործում են երեք անձ՝ Դավիթ թագավորի չորրորդ որդին՝ Ադոնիան (ԲԹգ., Գ 4, ԳԹգ. Ա 5, 7, 8...), ևս դևտացի երկու անձինք (Ա Մն., Գ 2, Բ Մն., ԺԷ 8...):

Տէր-ը, Աստված, Ամենակալ, Արքա, Դատավոր, Թագավոր, Իշխան, Հայր, Փրկիչ, Սաբաովթ, Չորությանց բառերի հետ իբրև պատվանուն, գործածվել է Աստվա-

¹⁷ Տե՛ս Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի (այսուհետև՝ ՀԱ), Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Սուրբ Էջմիածին, 2012:

¹⁸ Տե՛ս ՀարմԲ, հ. 1, էջ 81:

¹⁹ Տե՛ս Բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Վենետիկ, 1769, էջ 8:

ծաշնչի բոլոր գրքերում՝ թե՛ Հին և թե՛ Նոր կտակարաններում, ինչպես՝ «Ձի ես եմ Տէր...» (Ղևտ.), «Ձի ես եմ Տէր Աստուած ձեր», «Տէր հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր իշխան մեր» (Ես., ԼԳ), «Տէր թագաւոր մեր, Տէր փրկիչ մեր՝ եւ նա փրկեցէ՛ գմեզ» (Ես., ԼԳ), «Այսպէս ասէ Տէր զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի» (Եր., ԻԵ), «Այսպէս ասէ Տէր ամենակալ՝ Աստուած Իսրայէլի» (Եր., ԻԵ):

Տէր Տէր-ի կիրառություններ. «Եւ ասէ Աբրամ. Տէր, Տէր...» (Ծն., ԺԵ 8), «Տէր Տէր, դու սկսար ցուցանել ծառայի քում» (Բ Օր., Գ 24), «...եւ ասեմ. Տէր Տէր, թագաւոր աստուածոց» (Բ Օր., Թ), «Եւ ասացես ցնոսա. Այսպէս ասէ Տէր Տէր...» (Եզկ., Բ): Եվ զարմանալին այն է, որ անունը չտալու պայմանը այնքան սկզբունքային է, որ Տէր-ը կրկնում են, բայց Աստծու անունը չեն տալիս, ինչպես. «Լո՛ւր, Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է» (Բ Օր., Զ), «Ա՛, ա՛, Տէր Տէր, զի տեսի զհրեշտակն Տեառն» (Ղտ. 2, Թ, Բ Թգ է, Գ Թգ., Ը, Ա Մն., Սղմ.):

Ամենակալ, Ամենակարող /Սաղայ/Շաղայ (հուն.՝ Σαδδαι, ասոր.՝ Էլ Շաղայ): Ըստ Աստվածաշնչի (Եզկ., Ա 24, Ժ 6)՝ եբրայերենում Աստծուն տրվող մականունն է Սաղա / Սաղ(դ)այ-ը: Սաղայ եբրայական բառ է՝ հունական տառադարձությամբ, որ նշանակում է ամենակալ, ամենակարող, ամենագոր²⁰: Ըստ Աճառյանի, «Բուն նշանակությունն անյայտ է, բայց հաւանաբար «ամենակարող», ծագում է եբր. «ուժեղ, զօրեղ լինել» արմատից..., եբր. և յն. ձևերի համեմատությունից երևում է, որ ուղղականն է սաղայի»²¹: Հին Կտակարանում չպետք է շփոթել երկու Սաղայ(ի) անունները. դրանցից մեկը՝ Սաղայ-ը տեղանուն է՝ տարածք Փառանի անապատում՝ Հովր լեռան տակ, իսկ մյուսն արդեն՝ Սաղ(դ)այ // Սաղ(դ)այի: Այստեղ արտառոց ոչինչ չկա, քանի որ համանուն հատկանուններ Աստվածաշնչում շատ են հանդիպում:

Ա-1 տեքստում՝ (Եզկ., Ա 24), կարդում ենք. «... եւ իբրեւ զձայն Աստուծոյ Սաղայի...», իսկ տողատակում նշվում է՝ եբր՝ Ամենակալ²²: Ա-2-ը Սաղայի փոխարեն (չմոռանանք, որ այստեղ անունները տրվում են չթարգմանված) տալիս է Ամենակարող, Ա-3 արևելահայերեն բնագիրը այս բառը տալիս է հունական տառադարձությամբ՝ «ինչպես Սաղայ Աստծու ձայնը», որը տողատակում բացատրվում է՝ «եբրայերեն՝ Էլ Շաղա - Ամենագոր Աստուած»:

²⁰ Չարմանալի է այն փաստը, որ, ըստ Համարարբառի, շուրջ երկու հարյուր գործածություն ունեցող Ամենակալ բառը բացակայում է Ռ. Ղազարյանի «Գրաբարի հումանիշների բառարանից» այն դեպքում, երբ Համարարբառը Ամենակարող-ի ոչ մի կիրառություն չի տալիս (տե՛ս Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն. Գրաբարի հումանիշների բառարան, Երևան, 2006):

²¹ Տե՛ս ՀԱԲ, հ. 3, 1979, էջ 153:

²² Կարծում ենք՝ այստեղ մի փոքր թյուրըմբռնում կա. տողատակում պետք է նշվեր եբր. Սաղայ կամ Շաղայ, հայերեն՝ Ամենակալ:

Հայտնության Ա 8-ում կարդում ենք. «Ես եմ Այբ եւ ես եմ Քէ²³, աւէ՛ Տէր Աստուած, որ էն եւ որ է, եւ որ գալոցն է. Ամենակալ» (Ա-1): Ա-2 և Ա-3 գրքերը այս նույն նախադասությունը տալիս են հետևյալ ձևով. «Ես եմ Ալֆա և Օմեղա, կըսէ՛ Տէր Աստուած, որ է, և որ էր և որ պիտի գայ՝ Ամենակալը», «Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան, – ասում է Տէր Աստուածը, – նա, որ է է, որ էր եւ որ գալու է. Ամենակալը»: Ինչպէս նկատում ենք, արևելահայերեն տեքստը տարբերվում է մյուսներից է-ի մեծատառ գրությամբ:

Աստվածաշնչի տարբեր գրքերում կիրառվում են Ամենակալ, Աստված Ամենակալ, Տէր Ամենակալ, Ամենակալ մեծանունը, Ամենակալ հզոր, Ամենակալ փրկիչ, Տէր Աստված թագավոր ամենակալ, Ամենակալ սուրբ տարբերակները, ինչպէս՝ «... զի՛նչ ածցէ՛ ի վերայ մեր Ամենակալն» (Հբ., ԲԲ 17), «... շունչ Ամենակալի է, որ ուսուցանէ զիս» (Հբ., ԼԳ 4), «Տէր Աստուած ամենակալ անուն է նորա...» (Ամս., Դ 13), «Իսկ սոքա զամենակալ հզորն յօգնականութիւն կոչէին» (Բ Մկբ., ԺԲ 28), «... - զամենակալ փրկիչ զսուրբն Աստուած իւրեանց օրհնէին...» (Գ Մկբ., Զ 20), և բազում այլ գործածություններ:

ՄՄԱ-ում Սաղոպի-ն տրված է ամենակարող կամ ամենաբավական ձևերով:

Գրաբարում իր մի քանի նշանակությունների կողքին Բավական բառը դառնում է Աստծուն տրվող անվանում՝ ամենակարող, ամենազոր, ամենակատարյալ նշանակություններով. «Մի՛ կոչէք զիս Նոռմին, այլ կոչեցէք զիս Դառնացեալ (հուն. Πικράν զի դառնացոյց զիս Բաւական յոյժ» (Հոթ, Ա 20), ասոր. Էլ Շադայ, Աստվածաշնչի Ա-3 և Ա-2 թարգմանությունները գործածում են Ամենակարող (հուն. ἰκανός) տարբերակը՝ արևելի. «Ամենակարողը խիստ դառնացրեց ինձ», արևմի. «Ամենակարողը դառնութեամբ լեցուց զիս»: Ասենք, որ հունարեն ἰκανός բառը նշանակում է և՛ ամենակարող, և՛ բավական. վերջիններս հայերեն թարգմանություններում դառնում են հատուկ, մինչդեռ Դառնացեալը կա նաև հունարենում:

Եհովա/Յախվե/Յահվե (ռուս. Иегова): Հին Կտակարանի եբրայական բնագրում Աստծու անունը տրվում է չորս տառով՝ YHWH, և մինչև այժմ հայտնի չէ, թե ինչպէս պետք է ճիշտ արտասանվեր այդ բառը. «До сих пор неясно, как следует правильно произносить это слово. В VII в. н. э. оно произносилось как *Адонай* – отсюда неверное чтение *Иегова*. Сейчас, исходя из лингвистического анализа, в научной традиции принято чтение *Яхве*»²⁴.

Օտար աղբյուրները նշում են, որ «как слово языка, четырех-буквенное имя Божия – *Яхве* (*Иегова*) – не имеет лексического значения. Четыре буквы представляют собой

²³ Տողատակում նշվում է, որ ոմանք դնում են Սկիզբ և Վախճան:

²⁴ *St'u* Женщины в легендах и мифах, ред. Кэролайн Ларрингтон, пер. с англ. О. Перфильева. М., 1998, с. 89–90.

наложение слов: *был, есть, будет*. Иногда это имя переводится на русский язык как *Предвечный*, но чаще – *Сущий*» (НЖБ, 12), «*Я есмь Сущий*» (ЭБ, 85)²⁵:

Աստվածաշնչի արևմտահայերեն (Ա-2) տեքստում Եհովա անվան բաղադրությունը տարբեր անվանումներ կան. Ծննդոց ԻԲ 14-ում տրվում է այն վայրի անվանումը, ուր Աբրահամը տանում է զոհելու իր Իսահակ որդուն. «Եւ Աբրահամ ան տեղին անունը Եհովայիւրէ կոչեց, որ մինչեւ այսօր կ'սուի, Տէրը լեռանը մեջ պիտի երևնայ»:

Ասենք, որ Աստվածաշնչի գրաբար և արևելահայերեն տեքստերը Եհովա անունը չեն գործածում, ուստի Սուրբ Գրքի գրաբար բնագրում (Ա-1, ՁԱ) այս տեղանունը թարգմանված է. «Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ Տէր Էտեւ, զի ասիցեն ցայսօր, Ի լերինն յայնմիկ Տէր երեւեցաւ»: Գրաբար տարբերակը, Եհովա անունը ընդհանրապէս չգործածելով, համապատասխան տեղերում տալիս է Եւ, Տէր տարբերակները:

Բերենք ևս մեկ օրինակ. Դատավորաց Ձ 24-ում (Ա-1) կարդում ենք. «Եւ շինեաց անդ Գեղէնն սեղան Տեառն եւ կոչեաց զնա Խաղաղութիւն Տեառն մինչեւ ցայսօր»: Արևելահայերեն (Ա-3) տեքստը պահում է այս տարբերակը՝ Խաղաղություն Տիրոջը, մինչդեռ արևմտահայերենում (Ա-2) տրվում է. «Եւ Գեղէնն հոն Տէրոջը սեղան մը շինեց, ու անոր անունը Եհովաշալում դրեց...»: Ի դեպ նշենք, որ НЖБ-ն ևս տալիս Иегова–Шалом անվանումը (341):

Ա-1 և Ա-3 տարբերակները Ելից գրքի ԺԷ 15-ում ներկայացնում են անվանման մեկ այլ տարբերակ. «... եւ անուանեաց զանուն նորա Տէր ապաւէն իմ, «Սովսէսը Տիրոջ համար զոհասեղան շինեց եւ դրա անունը դրեց «Տէրն իմ ապավէնն է»: Հունարենում տրվում է Κύριος μου καταφύγι, ինչը համարժեքն է հայերեն կապակցության: Ասորերենում այս նույն հատվածում տրվում է Մառյա Նասի, որ բառացի նշանակում է Տէրը բուժում է ինձ: Ա-2-ը այդ անվանումը տալիս է յթարգմանված. «Եւ Սովսէս սեղան մը շինեց, ու անոր անունը Եհովանիսի դրաւ» (դարձյալ նույնանալով НЖБ-ի հետ), իսկ տողատակում անվան նշանակությունը բացատրում է՝ «Տէրը իմ դրօշակն է» (հմմտ. Иегова–Ниси - Господь знамя мое) 263):

Ասենք նաև, որ եբրայերեն բնագրում առկա Եհովա Ռաֆա – Աստված ինձ բժշկեց կամ իմ բժիշկն է (Ել. ԺԵ 26), Եհովա Ռաահ – Աստված իմ հովիվն է (Հվհ., Ժ 11), Եհովա Սեդեկ – Աստված մեր արդարությունն է (Եր., ԻԳ 6), Եհովա Շամա – Աստված ներկա է (Եզկ., ԽԸ 35) անունները մեր կողմից քննվող տեքստերում տրվում են թարգմանաբար:

Ի դեպ, եբրայական բազմաթիվ անուններում -իա վերջնաբաղադրիչը նշանակում է Եհովա, ինչպես՝ Ամասիա – Եհովան հզորացնում է, Երեմիա – Եհովան

²⁵ Энциклопедия Библейская (далее – ЭБ), 2-е изд. М., 2004, с. 694.

բարձրացնում է, Եղիա – Եհովան իմ Աստվածն է, Եղիաբ – Աստված հայր է, Անանիա – Տիրոջ տուն կամ տիրոջ գուշակություն, Աբիա – Եհովան եղբայր է, Չաբարիա – Եհովան հիշում է, Յեղիդիա – Տիրոջ սիրելի, Հոսիաս – Աստված գորավիզ է և այլն:

Եհովա-ն ոչ միայն վերջնաբաղադրիչ է հանդես գալիս: Ա-2-ում՝ Բ Մն., ԺԷ 15-ում առկա է Յոհանան (հուն.՝ Ἰωανναν, ասոր.՝ Յուխանան) անունը, որը Ա-1 և Ա-3 գրքերում համապատասխան անձի անունը տրված է Յովնան տարբերակով: Արդյոք դրանք նո լյն անուններն են: Օտար աղբյուրները Յոհանան անունը ներկայացնում են Иегоханаан ~ Иоханаан տարբերակներով և անվան իմաստը տալիս дар Иеговы (ՁԵ, 263): ԲՅԱ-ն տալիս է Յոհանան և այն բացատրում Տիրոջ շնորհ կամ պարգև կամ ողորմություն (170): Բայց ամբողջ հարցն այն է, որ այս դեպքում ԲՅԱ-ն նկատի ունի բոլորովին այլ անձի, որ հանդես է գալիս Ա և Բ Եզրասի գրքերում (նկատի ունի Բարեի որդուն), և անվան այդ ձևը հղում է Յովհաննես անվանը: Ի դեպ, նույն իմաստն ունեն ոչ միայն այս, այլև Յովհաննես, նաև Յովնան, Յոնան, Յոհաննա անունները:

Այսուհանդերձ, միշտ չէ, որ -իա-ն Եհովա է ընկալվում, այսպես՝ Մադաբիա – հրեշտակ իմ:

Կարելի է առանձնացնել անունների մի ողջ շարք էլ, որտեղ Աստված, Տեր, Եհովա անուններն արտահայտող վերը բերված բաղադրիչները չկան, բայց անվան մեկնաբանության մեջ դարձյալ առկա է Աստվածը, ինչպես՝ Հեսու – Աստված է մեծանձն, Աբիուդ – նա է Հայրը (Աստծու մասին), Աբեսադում – Հայրն է խաղաղությունը (Տիրոջ մասին), Ջեբեդեոս – Եհովայի տուրք կամ Աստծու նվեր, պարգև, Հովսեփ – աստուածաբնակ:

Է (ԵՄ): Ելից գիրքը Աստվածաշնչի անվանաբանական ողջ համակարգի համար ունի խիստ էական ու առանձնահատուկ դերակատարում. տարբեր անուններով ու անվանումներով հանդես եկող Աստվածն այս գրքի Գ 14 հատվածում հայտնում է իր անունը և բացում իր անվան նշանակությունը՝ ՈՐ ԷՆ, որտեղից էլ առաջ է եկել YHWH տեոթագրաման: «Եւ ասէ Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ: Եւ ասէ. Այսպէ՛ս ասացես ցորդիսն Իսրայէլի, ՈՐ ԷՆ առաքեաց զիս առ ձեզ» (Ել., Գ 14):

Աստվածաշնչում Ես եմ ձևը բազմիցս գործածված է այսպես՝ Ծննդոց գրքի ԺԷ գլխի 1 հատվածում կարդում ենք. «Եւ երևեցաւ Տէր աստուած Աբրամու և ասէ ցնա. Ե՛ս եմ Աստուած քո..», ԻԶ 24-ում՝ «Ես եմ Աստուած հօր քոյ...», (ԵԼ., Գ 14). «Եւ Աստուած ասեց Մովսէսին. Ես եմ, որ ԵՄ. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ինձ ԵՄը ուղարկեց ձեզ մօտ...այս է իմ անունը յաւիտեան, եւ այս է իմ յիշատակը ազգից ազգ...»: Այս նշանակությամբ հին ժամանակ զանազան գրություն-

ներում՝ ուղերձներ, նամակներ, կոնդակներ, սկզբում գրվում էր գլխատառ *Է*, որ նշանակում էր Աստված, Աստծով, հանուն Աստծու:

Ուրեմն՝ Աստծու անունն է *Է* կամ *ԵՄ*՝ իբրև միշտ եղողի, այսինքն՝ ինքնագոյություն, աստվածային անսահմանություն: Աստծո ներկայությունը առհասարակ միշտ արտահայտվում է գոյության, լինելիության հարաբերակցության մեջ: Մուրբ Գրքում Աստծո ներկայությունը միշտ առնչվում է մարդու գոյության հետ, ուստի անվան իմաստն էլ պետք է որ բխի այդ էությունից: Իսկ ընդհանրապես պե՞տք էր Աստծուն անուն ունենալ. չէ՞ որ նա միակն է, եզակին, անկրկնելին: Կարծում ենք՝ հենց անուն բառի ստուգաբանության մեջ ինչ-որ չափով կա դրա պատասխանը: Հակոբ Գաբրիել Ավետիքյանը տալիս է այն ուն կամ էն ուն ստուգաբանությունը՝ որպես էություն ունեցող, գոյացած, կենդանի, քանի որ ըստ նրա՝ անուն դրվում է գոյացած բանին և ոչ թե չեղածին: Հ. Գաբրիել Ավետիքյանը, հիմնվելով «Յաճախապատում ճառք»-ի հետևյալ հատվածի վրա՝ «Բնութեանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսա ի միմեանց, և անուանցն՝ բնութիւնքն պիտոյ են՝ որ կային ունէին զանուանսն», նշում է, որ մարդիկ հնարեցին անունը երկու պատճառով՝ «... մէկ մը գոյացած եղած բանը նշանակելու, մէկ մալ բան բանէ որոշելու, զատելու համար»²⁶: Ուրեմն տվյալ պարագայում Աստված իր անունը հայտնում է ոչ իրեն զանազանելու միտումով, այլ բացահայտելու իր բուն էությունը:

Այս հատվածը համեմատել ենք մի շարք թարգմանություններում: Սա, թերևս, համարժեքն է հունարեն բնագրին՝ Յոթանասնիցին. «Καὶ εἶπεν ὁ θεὸς πρὸς Μωϋσῆν· Ἐγὼ εἰμι ὁ ὢν καὶ εἶπεν Οὕτως ἐρεῖς τοῖς υἱοῖς Ἰσραὴλ· Ὁ ὢν ἀπέσταλκεν με πρὸς ὑμᾶς»:

Ա-1 – «Ես եմ Աստուած, ՈՐ ԷՆ»:

Ա-2 – «Եւ Աստուած ըսաւ Մովսէսին՝ Որ ԷՆ»:

Ա-3 – «Ես այն Աստուածն եմ, որ Է»:

ՄՄՄ – «Ես եմ Աձ, որ Էն»:

ԶԱ – «Ես եմ Աստուած, որ Է՛ն»:

Յոթանասնից (Մեպտուազինտա) – *w*²⁷ – *Egw eimi o wn.*

Յոթանասնից (Մեպտուազինտա) – *p*²⁸ – ... *egw eimi o wn.*

Պեշիթթա – Ահյահ Աշառահյահ

Վուլգատա²⁹ – ... *ego sum qui sum.*

Գերմաներեն – *w*³⁰ – *Ich werde sein, der ich sein werde.*

²⁶ Հ. Գ. Ավետիքեան. Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 191:

²⁷ Septuaginta, Stuttgart, 1979.

²⁸ Septuagint Version of Old Testament with an English Translation, London.

²⁹ Biblia Sacra Luxta Vulgatam versionem Stuttgart, 1994.

³⁰ Die Bibel nach der Übersetzung Martin Luthers, Stuttgart, 1985.

Գերմաներեն– բ)³¹– *Ich bin der Ich-bin-da.*

Անգլերեն³²– *I AM THAT I AM.*

ИЖБ – «Я емь Сущи».

Տրված գրեթե բոլոր նախադասություններում Աստծու հայտնած անունը արտահայտվում է ԵՍ բայի միջոցով: ՆԲՀԼ-ում նշվում է, որ կոնդակների սկզբում դրոշմված Է-ն ունի Աստված և Հանուն Աստծո նշանակությունները, ապա ավելացվում, որ այն գալիս է հինկտակարանյան ՈՐ Էն-ից³³:

Հայերենում առարկային գոյություն, լինելիություն տալու համար անհրաժեշտաբար գործածում ենք օժանդակ բայ, ինչպես՝ մարդ և մարդ է: Երկրորդ դեպքում մենք վերացական դաշտից անցանք թանձրացական դաշտ, մարդ առարկան դարձավ շնչավոր, կենդանի, գոյություն ունեցող: Տվյալ պարագայում Է-ն այստեղ ոչ միայն լեզվական, այլև խորհրդանշական արժեք է ձեռք բերում. Է անունը փաստում է, որ Աստված Ինքն է Կենդանի Արարիչը:

Հունարեն Յոթանասնիցից երկու բնագիր է տրվում, որոնք նույն բնագրի տարբեր հրատարակություններ են ներկայացնում: Տրված երկու տարբերակներն իրարից տարբերվում են քերականական որոշ փոփոխությամբ: Մի տեղ նույն բառը տրվում է փոքրատառ, մյուսում՝ մեծատառ: Հունարեն հատվածը՝ Էγω (Ես) εϋμ (Եմ) ο ω (Եմ), այսինքն՝ որպես բայ, որի նշանակությունն է գոյություն, կենդանություն, ինչպես εϋμ -ի դեպքում (բառացի կրկնվում է գրաբարում):

Լատիներեն Վուլգատան հատվածը՝ *ego sum qui sum*, հայերեն թարգմանվում է՝ Ես եմ, որ (ով) եմ: Հունարեն-գրաբարի համեմատությամբ տեսնում ենք, որ տարբերությունը Է-ի փոխարեն տրվում է առաջին դեմքով՝ Եմ: Կարծում ենք, որ Վուլգատայի համար հիմք են դարձել արամեերեն Թարգումներից որևէ մեկը և ոչ թե Յոթանասնիցը: Մակայն իմաստային առումով որևէ շեղում չկա. Եմ-ը այստեղ նս նշանակում է գոյություն:

Նույն հատվածը տրված է գերմաներեն երկու բնագրերով. առաջինը Մարտին Լյութերի թարգմանության տեքստից է, մյուսը՝ ժամանակակից գերմաներենով Աստվածաշնչից: *Ich bin der Ich-bin-da* - ն հայերենով թարգմանվում է՝ Ես եմ, որ ես եմ: *da* բաղադրիչը հատվածում ցույց է տալիս տվյալ անձի այդտեղ այդ պահին լինելը, իսկ *der-ը* (որ) գերմաներենում արական սեռի ցուցիչ է: Նույն ձևով հունարեն տեքստում ձ օն արտահայտության մեջ *ο* հնչյունը (արտասանվում է *ho*) նույնպես արական սեռի արտահայտման ցուցիչ է: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ գերմաներեն թարգմանությունը կարող է կատարված լինել հունարեն բնագրից՝ լատի-

³¹ Die Bibel in heutigen Deutsch, Nordlingen, 1994.

³² The King James II Version of the Bible, Printed in the USA, 1982.

³³ Տե՛ս Գ. Ավետիքեան, Խ. Միլրմեկեան, Մ. Ալգեբեան. հ. 1, 2, Վենետիկ, 1836, 1837: Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀԼ), էջ 758:

ներենի հետ համեմատությամբ: Այլ է պատկերը Լյութերի թարգմանության հիման վրա կազմված տեքստում՝ *Ich werde sein, der ich sein werde*. Բառացի թարգմանելիս կունենանք Ես կլինեմ, որ կլինեմ, այսինքն՝ նույն արտահայտությունն է, միայն ապառնի ժամանակով: Սա նաև փաստում է, որ իսկապես Է-ն բայական արժեք ունի:

Անգլերեն հատվածը՝ *I AM THAT I AM*, թարգմանվում է Ես եմ, որ եմ՝ կրկնելով լատիներեն տեքստը:

Պատկերը բոլորովին փոխվում է ռուսերեն թարգմանության մեջ՝ «Я емь Сущий», որտեղ, ինչպես տեսնում ենք, բայն այլևս չկա և նաև շարունակության մեջ՝ «И сказал: так скажи сынам Израи-левим: Сущий (Иегова) послал меня к вам». Կարծում ենք, թարգմանիչներն այս դեպքում ոչ թե բառային, այլ իմաստային թարգմանություն են կատարել, որն էլ խորհրդանշում է անսկիզբ գոյություն, լինելիություն, ի վերջո, Ասենագոր էություն:

Հայր (հուն.՝ πατήρ, ասոր.՝ Ավա, ռուս.՝ Отец): Երբայերենում հայր բառի համարժեք արմատն է ար (հմմտ՝ Աբրամ, Աբրահամ-բազմության հայր): Հայր բառի առաջին գործածությունը³⁴ Ծննդոցում՝ այր ծնող զավակի համար իմաստով է. «Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր» (Բ 24), այնուհետև բառն արտահայտում է նախնի, նախահայր իմաստները. գրաբար տեքստում առկա հայրը արևելահայերեն տեքստում թարգմանվել է նախահայր. «... նա է հայր այնոցիկ...», «Սա խաշնարածների վրաններում բնակուողների նախահայրն է» (Ծն., Դ 20-21)³⁵: Իսկ սա նշանակում է, որ հայր բառի նախնական իմաստներից է նաև նախահայր, նախնի, և այս իմաստով գործածությունները շատ են հատկապես Ծննդոց գրքում: Իսրայելում մեծ էր հոր նկատմամբ հարգանքն ու պատկառանքը. հայրական օրհնանքն անչափ կարևոր էր և գնահատելի: Հիշենք թեկուզ Ծննդոցում Իսահակի օրհնանքի պատմությունը իր որդիներին՝ Հակոբին և Եսավին (Ծն., ԻԷ 23-41):

Աստժու՝ Հայր անվանմամբ առաջին գործածությունը տրվում է Բ Օր., ԼԲ 6-ում. «... ո՛չ նա է Հայրն, որ ստացաւ զքեզ, արար զքեզ, եւ հաստատեաց զքեզ», «Մի՞ թէ նա այն հայրը չէ, որ քեզ շահեց, քեզ արարեց, ու հաստատեց քեզ»: Բացի այս գործածությունից, Հայր անունը հանդիպում ենք Հին Կտակարանի Ա Մնացորդաց, Սաղմոսների գրքերում, Եսայու, Երեմիայի և Մաղաքիայի մարգարեությունների գրքերում, ինչպես նաև Տովբիթի և Սիրաքի գրքերում³⁶:

³⁴ Ասենք, որ հայր բառը բոլոր իմաստներով հանդերձ Աստվածաշնչում կիրառվել է 1732 անգամ (տես՝ ՀԱ):

³⁵ Նշված տեղում գրաբար տեքստի երկրորդ գործածությունը՝ «... նա է հայր, որ եցոյց զերգս և զբնարս», արևելահայերեն թարգմանության մեջ բացակայում է. «Նա է յօրինել երգն ու բնարը»:

³⁶ Վերջին երկուսը բացակայում են ռուսերեն տեքստերում:

Նոր Կտակարանում Աստված իբրև Հայր կամ Երկնային Հայր կիրառությունները բազմակի են: Ադամական մեղքը մարդկանց գրկեց որդիական իրավունքից, իսկ այն վերստին հաստատվեց Հիսուս Քրիստոսով, և իզուր չէ, որ մեր աղոթքն առ Աստված սկսվում է «Հայր մեր»-ով:

Մատթեոսի Ավետարանում Հիսուսն արգելում է ժողովրդին և իր աշակերտներին որևէ մեկին Հայր կոչել. «Եւ երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք, որովհետեւ մէկ է ձեր Հայրը, որ երկնքում է» (ԲԳ 9): Իսկ Հովհաննի Ավետարանում Հիսուսը Մարիամին արգելում է իր հետնից գալ, և նրան դիմում է՝ ով կին և Մարիամ, ու հիմնավորում է իր այս քայլը հետնյալ խոսքերով. «Ինձ մի՛ մօտեցիր, քանի որ դեռ չօրս մօտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մօտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը» (Հվհ., Բ 17):

Հովհաննի Ավետարանում Հիսուսն Աստծուն Արդար Հայր է անվանում. «Արդա՛ր Հայր, թէեւ աշխարհը քեզ չճանաչեց, բայց ես քեզ ճանաչեցի...» (ԺԷ 25):

Եսայու մարգարեության Թ 6 հատվածում եբրայերեն «Ժշխան յաւիտենականության, Հայր խաղաղութեան»-ը Ա-1-ը և Ա-3-ը տվել են «Իշխան, Հայր հանդերձեալ աշխարհի», մինչդեռ Ա-2-ը պահել է եբրայական ձևը՝ «Յաւիտենականութեան Հայր»:

Մարկոսի Ավետարանում (ԺԴ 36) Հիսուսը Գեթսեմանի պարտեզում աղոթելիս Աստծուն դիմում է Աբբա Հայր (հուն.՝ Ἄββα ὁ πατήρ, ռուս.՝ Авва Отче) ձևով: Արդեն նշել ենք, որ աբ բաղադրիչը եբրայերենում հայր է նշանակում, իսկ տվյալ կապակցության մեջ՝ Հայր-Հայր կամ Հայրերի հայր, որն այստեղ ավելի է սերտացնում Հոր և Որդու կապը. «Աբբա՛ Հայր, ամէն ինչ քեզ կարելի է. Այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ ինչպէս ե՛ս եմ կամենում, այլ՝ ինչպէս դո՛ւ ես կամենում»:

Բարձրյալ (հուն.՝ ὑψιστος աստր.՝ Մոսյմա, ռուս.՝ Всевышний) անվանումը Աստծու համար հանդես է գալիս թե՛ իբրև անուն, թե՛ մականուն: Առաջին դեպքում նա գոյական է, երկրորդում՝ ածական: Ըստ Ռ. Ղազարյանի՝ ածական իմաստով նշանակում է բարձր, բարձրում եղող, վերին և որպէս գոյական՝ ամենաբարձր (Աստծու մասին)³⁷: Իսկ Լ. Խաչատրյանի կարծիքով, սա նախ և առաջ գոյական է՝ ինքը՝ Աստված. «Ետ զձայն իւր Բարձրեալն» (Սղմ., ԽԵ 7), և ապա իբրև ածական՝ ամենաբարձր, վեհ, վերևում գտնվող. «Թագաւոր Բարձրեալ...» (Նար.)³⁸:

Շուրջ հարյուրի են հասնում Բարձրյալ-ի կիրառությունները Աստվածաշնչի տարբեր գրքերում: Առաջին գործածությունն արդեն Ծննդոցում է որպէս Աստծու մակդիր-որոշիչ. «... քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ» (ԺԴ, 18): Բ Օրինացում այն արդեն փոխարինում է Աստված անվանը. «Յորժամ բաժանեաց Բարձ-

³⁷ Տե՛ս Ռ. Ղազարյան. Գրաբարի բառարան, հ. Ա, Երևան, 2000, էջ 275:

³⁸ Տե՛ս Լ. Խաչատրյան. Գրաբարի բացատրական բառարան, Երևան, 2003, էջ 89:

րեայն զագգս ամենայն» (ԼԲ, 8): Առավել հաճախ հանդիպում է սաղմոսներում, և դա բնական է. դրանցում փառաբանվում է Աստված: Նոր Կտակարանում Բարձրյալը գործածված է Մարկոսի և Ղուկասի ավետարաններում և Գործքում. «Նա եղիցի մեծ, եւ Որդի Բարձրելոյ կոչեացի» (Ղկ., Ա 32):

Դատավոր (հուն.՝ Կրոտհ, ասոր.՝ Դայա՛նա, ռուս.՝ Судья) անվամբ Հին Կտակարանում տրվում է մի ամբողջ գիրք՝ Դատավորներ (Կրոտհ, Судья), որտեղ նկարագրվում է տարբեր ցեղերի անկարգ, անիշխանական բարքերը, թշվառությունը, Աստծո ճանապարհից շեղվելը: Միջագետքի, Քանանի, Մովսրի, Մադիամի թագավորներն ու հարստահարիչներն ամեն ինչ անում են իրենց ուզած ձևով, ժողովուրդն ապաշխարում է, ապավինում Աստծուն, և Աստված ուղարկում է իր դատավորներին:

Բայց դատավոր-ի առաջին կիրառությունը դեռևս Ծննդոց գրքում է տրվում. «Եւ Աստուած Նաքովրայ եղիցի դատաւոր ի միջի մերում» (ԼԱ, 53): Մարդկային խճճված հարաբերություններում Աստված պետք է որ ստանձներ դատավորի դերը: Աբրահամի Աստվածը, Իսահակի, Նաքովրի,... և այլոց Աստվածը պետք է դառնար անպայմանորեն բոլորի Դատավոր (Եբր., ԺԲ 23): Ի՞նչ անցումներով: Նախ, մարդը ինքն է խնդրում Աստծուն արդար դատավոր լինել. «Եղիցի Տէր դատաւոր եւ իրաւարար ընդ իս եւ ընդ քեզ» (Ա Թգ., ԻԴ 16): Ապա արդեն հաստատվում է, որ նա է դատավորը. «... զի Տէր ինքն դատաւոր է» (Սբ., ԼԵ 15) կամ՝ «... զի դատաւոր Տէր Աստուած մեր է» (Ես., Լ 18): Այնուհետև արդեն դատավոր-ն ինքը ստանում է մակդիրներ՝ արդար, բարերար և այլն. «Աստուած դատաւոր արդար, հզօր եւ երկայնամիտ» (Մղմ., Է 12): Ի դեպ, նշենք, որ ռուսերեն բնագրում ամեն ինչ համարժեք է. երկայնամիտ մակդիրի դիմաց ռուսերենում долготерпеливый բառն է՝ բառարաններում երկու նշանակությամբ բացատրվող՝ երկայնամիտ և համբերատար: Գրաբար տեքստը տալիս է երկայնամիտ ձևը, մինչդեռ արևելահայերեն տարբերակում (Ա-3)՝ համբերատար:

Ոչ միայն Դատավոր-ը, այլև Արքա, Թագավոր, Հզոր, Երկնավոր, Կենարար, Բարերար անունները անպայմանորեն պետք է դիտարկել իբրև ոճանուններ, քանի որ տեքստից դուրս դրանցից ոչ մեկը ընկալելի չէ իբրև Աստված: Արքան և Թագավորը³⁹ հավասարապես ակնարկում են ինչպես Հայր Աստծուն, այնպես էլ Հիսուս Քրիստոսին. «Եւ կացի յաղօթս առ Տէր ասեմ. Տէր, Տէր, Թագաւոր» (Բ Օր., Թ 26), «Տէր Աստուած Թագաւոր Ամենակալ...» (Եսթ., ԺԴ 9), «... կոչեաց զՀիսուս եւ ասէ ցնա. դո՛ւ ես Թագաւոր Հրեից» (Հվհ., ԺԹ 33): Սուրբ Գրքում արքա և թագավոր բառերի հաճախականությամբ թեն գերազանցում է արքան (1806–1397), սակայն ոճանուն կիրառությամբ շատ ավելին է թագավորը. Արքա ոճանվան ընդամենը

³⁹ Ասորերենում կա միայն՝ թագավորը (Մալքա), իսկ արքա-ն Պեշիթթայում ընդհանրապես չկա:

տասնմեկ գործածություն ունենք Թագավորի ութ տասնյակ կիրառության դիմաց: Բայց այս վիճակագրությունից ավելի հետաքրքիր է մեկ այլ բան, այն, որ թե՛ հունարենում և թե՛ ռուսերենում տրվում է այս ոճանունների միայն մեկ տարբերակ՝ հունարեն՝ βασιλεύς, και κύριος ὁ θεός ἡμῶν βασιλεύς ἡμῶν, ռուսերենում՝ царь. «... Господь Бог ваш – Царь ваш...»⁴⁰, մինչդեռ հայերենը՝ թե՛ արքա, թե՛ թագավոր. «... և Տէր Աստուած մեր՝ Թագաւոր մեր» (Ա. Թգ., ԺԲ 12), բայց նաև՝ «... և փառաւոր առնեմ զԱրքայն երկնից...» (Դն., Դ 34):

Աստծո անունները այսքանով չեն ավարտվում⁴¹: Աստված ամենասկզբում՝ Ծննդոցում, Աբրահամի, Հակոբի, Իսահակի Աստվածն է, այսինքն՝ անձերի, հետո նա դառնում է Իսրայելի Սուրբը՝ Իսրայելի Աստվածը (Ես., ԽԳ 3), Աստվածների աստվածը (Դն., Բ 47):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Մն. – Ա Մնացորդաց
 Ամս. – Մարգարեություն Ամովսի
 Բ Մն. – Ա Մնացորդաց
 Բ Օր. – Երկրորդումն Օրինաց
 Դն. – Մարգարեություն Դանիելի
 Դտ. – Գիրք Դատաւորաց
 Եբր. – Թուղթ առ Եբրայեցիս
 Եզկ. – Մարգարեություն Եզեկիելի
 Եզր. – Գիրք Եզրասի
 Ել. – Ելք
 Ես. – Եսայի
 Եսթ. – Եսթեր
 Եր. – Երեմիա
 Թգ. – Ա, Բ, Գ, Դ Թագաւորութեանց
 Թվ. – Թիւք
 Ծն. – Ծնունդք
 Հբ. – Յովք

⁴⁰ Հետաքրքիր է այն, որ Սուրբ Գրքի ռուսերեն տեքստում ընդհանրապես չի գործածում король բառը, չնայած Ար. Ղարիբյանի Ռուս-հայերեն բառարանը թե՛ արա և թե՛ царь - ի դեպքում տալիս է նույն թագավոր, արքա տարբերակները, բայց միայն՝ царство небесное, իսկ հայերենում և՛ երկնային արքայություն, և՛ երկնային թագավորություն:

⁴¹ Աստծուն ուղղակիորեն առնչվող Էլոհիմ և Սաբավոթ անուններին կանդրադառնանք Աստված բառի ստուգաբանության բաժնում:

Հդ. – Յուդիթ
 Հռթ. – Հռութ
 Հով. – Առ Հովմայեցիս
 Հվհ. – Աւետարան ըստ Յովհաննու
 Ղևտ. – Ղևտացւոց
 Ղկ. – Աւետարան ըստ Ղուկասու
 Մդբ. – Մադաբիս
 Մտթ. – Աւետարան ըստ Մատթէոսի
 Մկբ. – Գիրք Մակաբայեցւոց Ա., Բ., Գ.
 Մրկ. – Աւետարան ըստ Մարկոսի
 Մղմ. – Գիրք Մաղմուսաց
 Մր. – Գիրք Միրաբայ

ИМЕНА И НАЗВАНИЯ БОГА
 В СВЯЩЕННОМ ПИСАНИИ
 (Отец Бог)

П А Р А Н Д З Е М М Е Й Т И Х А Н Я Н

Резюме

В Священном Писании Бог фигурирует под разными именами и названиями: Бог есть Արարիչ (Создатель), он – Տէր (Господь) всего, Թագաւոր (Царь), Դատաւոր (Судья) и Իշխան (Князь). Он Ամենալից (Вездесущ), Ամենալիցորդ (Всемогущий), Բարձրից (Все-вышний), Բրուտ (Образователь), Բաւաւան (Достаточный), Երկնաւոր (Небесный), Հզոր (Могучий), Կենարար (Творец). Анализ части этих названий весьма важен с переводческой, семантической, лингвистической и стилистической точек зрения. Книга Исхода имеет весьма существенное и своеобразное значение в ономастической системе Библии, так как в главе 3.13–14 этой книги Бог, который является под разными именами и названиями, раскрывает свое имя и его значение – Я есмь Сущий. Сравнение армянских собственных имен и названий с их аналогами на других языках (греческом, ассирийском, латинском, немецком, русском) показывает, что тексты на грабаре и восточноармянском имеют много сходств с греческой Септуагинтой, меньше – с ассирийской. Собственные имена западноармянского и русского текстов Библии в переводческом контексте почти аналогичны.

THE NAMES AND THE TITLES GIVEN
TO GOD IN THE HOLY BOOK
(The Father)

PARANDZEM MEYTIKHANYAN

S u m m a r y

In the Holy Book God has many names and titles: God is Արարիչ (Creator), he's – Տէր (Lord) of all, Թագավոր (King), Դատավոր (Judge) and Իշխան (Prince). He is Ամենակալ (Omnipotent), Ամենակարող (Almighty), Բարձրյալ (Most Highly), Բրուս (Potter), Բավական (Enough), Երկնավոր (Heavenly), Հզոր (Mighty), Կենսաբար (Life-giving). We analyze some of these names with reference to translation, semantic, linguistic and stylistic aspects. Exodus has a very significant and unique role in the onomastic system of the Bible, as in 3.13 – 14 of this book God, who has different names, reveals the interpretation of the names: I AM THE ESSENCE. The comparison of the Armenian proper names and titles and their equivalents existing in other languages (Greek, Assyrian, Latin, German, Russian) shows that the texts in ancient and Eastern Armenian have a lot of similarities with the Greek Septuaginta but they are quite different from the Assyrian one. The Proper Names in Western Armenian and Russian versions of the Bible with reference to translation are nearly identical.